արկածներ իր ճանապարհորդութիւններից, պատմում էր, թէ ինչ էր տեսել եւ ինչ էր արել զանազան երկրներում, խօսում էր Հայրիկի մասին, նրա աշխատութիւնների մասին, խօսում էր տեղային քահանաների տգիտութեան մասին, եւ նրա խօսակցութիւնները այնքան հետաքրքիր էին, որ բոլորը ես մեծ ուրախութեամբ լսում էի:

— Դուք կարծում էք տիկինը կարո՞ղ է գալ, — հարցրեց Ասլանը քահանայից, ընթրիքի սեղանը հաւաքելուց յետոյ:

— Կարող է, եւ անպատճառ այս գիշեր այստեղ կը լինի, — պատասխանեց քահանան վստահութեամբ:

— Բաւական դժուար կը լինի նրա համար... ինչպէ՞ս կարող է... — կրկնեց Ասլանը թերահաւատութեամբ...

— Նա իր բանը գիտէ... նա այդ տեսակ գործերի համար բաւական խելք ունի... — ասաց քահանան:

Ասլանը մեծ անհամբերութեամբ սպասում էր մի տիկնոջ, այդ տիկինը տէր հօր քոյրն էր: Տէր հայրը իր հայրենիքից բացակայ գտնուած ժամանակ, նրա տանը պատահել էր երկու անփոխարինելի կորուստ. մայրը վախճանուել էր, իսկ միակ քոյրը, անտէր մնալով, բռնութեամբ յափշտակուել էր եւ մի տաճկի ամուսին էր դարձել: Այդ յափշտակութիւնը, որովհետեւ երկրի սովորական դէպքերից մէկն էր, անցել էր խիստ ներողամտութեամբ հայ հասարակութեան կողմից. իսկ տէր հայրը, որ անչափ սիրում էր իր քրոջը, որպէս երեւում էր, չէր կարող մոռանալ այդ դժբախտութիւնը: Մահմեդականութիւնը շատ պայմաններ ունի, ոչ միայն օտարազգիներին ամենայն դրութեամբ որսալու, այլեւ նրանց թէ՛ կրօնապէս եւ թէ՛ ազգայնապէս իր հետ միացնելու: Այդ էր, որ աւելի ցաւեցնում էր տէր հօրը: Մի հայ աղջիկ կամ տղայ, կամաւ, թէ ակամայ, երբ մահմեդականի հետ է ամուսնանում, այնուհետեւ կտրւում են նրա բոլոր յարաբերութիւնները իր ազգակիցների հետ եւ այլեւս իրան հայ կոչել չէ կարող: Մի հայի պատահելիս՝ նա իրաւունք չունի հայերէն խօսել. նա զրկւում է մինչեւ անգամ իր ծնողների տունը գնալուց. եւ «հայ» անունը նրա բերանում այնուհետեւ փոխւում է «գաւուր» անունով, որից պէտք է խորշիլ, որին պէտք է պիղծ համարել: Բայց տէր հօր քոյրը այդ մասին մի գեղեցիկ բացառութիւն էր կազմում. նա մնացել էր հաւատարիմ թէ՛ իր ազգին եւ թէ՛ կրօնին, թէեւ ամենայն զգուշութեամբ մահմեդականներից թաքցնում էր իր զգացմունքները: Նա սիրում էր իր եղբօրը եւ երբեմն գաղտնի կերպով գալիս էր նրա տունը, ուրախանամ էր նրա երեխաներով եւ փառք էր տալիս աստծուն, որ իր հօր տան օջախը իսպառ մարած չէր: